ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 29 2026 № 1

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ARCHITECTURE

ՀՏԴ՝ 72
DOI : 10.52971/18294316-2026.29.1-276

ԴԱՇՏԱԴԵՄ ԱՄՐՈՑՈՒՄ ՈՐՈՇ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԹՎԱԳՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Անի Հ. Վահրամյան, Արմեն Ս. Աբրոյան
Ճարտարապետության տեսության, պատմության և ժառանգության ամբիոն,
ՃՇՀԱՀ, Երևան, ՀՀ

Ամփոփում
Նախաբան. Դաշտադեմ ամրոցը գտնվում է պատմական Հայաստանի Այրարատ նահանգում, համեմատաբար հարթ լանդշաֆտում՝ ի տարբերություն հայկական պաշտպանական կառույցների բացարձակ մեծամասնությանը: Բացի պատմական, հնագիտական և ճարտարապետական բազմաշերտ հուշարձան լինելուց՝ Դաշտադեմ ամրոցը կարևոր ռազմական, պաշտպանական, ստրատեգիական հենակետ է եղել, որը գոյության տարբեր շրջաններում հանգրվան է հանդիսացել իշխանական տարբեր տոհմերի համար և հսկել է Անի-Դվին ճանապարհը: Հուշարձանից հարավ սփռված են Քաղենի բնակավայրի ավերակները և Սբ Քրիստափոր եկեղեցին (7-րդ դար): *Մեթոդներ և նյութեր.* Հետազոտությունն իրականացվել է պատմական աղբյուրների համալիր ուսումնասիրության և շինարարական, տիպաբանական, համաչափական համադիր վերլուծության հիման վրա: Օգտագործվել են նաև հրապարակված հնագիտական տվյալներ և քարտեզագրական նյութեր: *Վերլուծություն.* Քննարկվել են ամրոցի ժամանակագրական տարբեր շերտերի առանձնահատկությունները, շինարարական լուծումները և դրանց վերաբերյալ ճշգրիտ վերլուծության բացակայությունը: Հարրիսի մատրիքսի օգնությամբ վերլուծվել են հուշարձանի շերտագրական տվյալները: *Արդյունքներ.* Մինչ այսօր հուշարձանի պատմական, ճարտարապետական շերտերի ամբողջական ուսումնասիրության բացակայությունը մասնագետների շրջանում տարաձայնությունների պատճառ է դարձել: Տվյալ աշխատությունը համալիր վերլուծության միջոցով լրացնում է շերտագրական տվյալների բացերը և եզրակացնում, որ Դաշտադեմ ամրոցը Բագրատունյաց շրջանում

արդեն իսկ հաստատված է եղել առնվազն շինարարական 4-րդ փուլում: *Հեղինակների ներդրումը.* Հեղինակները իրականացրել են պատմական աղբյուրների համալիր հավաքագրում, ճարտարապետա-տիպաբանական ուսումնասիրություն, շերտագրական վերլուծություն և նյութերի գրառում՝ զուգահեռ ամբողջացնելով հետազոտության եզրակացությունները:

Բանալի բառեր՝ *Թալին, պեղումներ, Անի մայրաքաղաք, Զաքարյաններ, Բագրատունիներ, արձանագրություն, Հարրիսի մատրիքսի մեթոդ:*

Ինչպես հղել՝ Վահրամյան Ա., Աբրոյան Ա. *Դաշտադեմ ամրոցում որոշ կառուցվածքների ժամանակագրական թվագրման խնդիրները* // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2026: Հ. 1 (29): 276- 292 էջեր: DOI: 10.52971/18294316-2026.29.1-276

ISSUES REGARDING THE CHRONOLOGICAL DATING OF SOME STRUCTURES IN DASHTADEM FORTRESS

Ani H. Vahramyan, Armen S. Abroyan

Department of Theory, History and Heritage of Architecture, NUACA, Yerevan, RA

Abstract:

Introduction: Dashtadem Fortress is located in Ayrarat province of historical Armenia, in a relatively flat landscape, unlike the majority of Armenian defensive structures. In addition to being a multi-layered historical, archaeological, and architectural monument, Dashtadem Fortress served as a crucial military, defensive, and strategic stronghold. In various periods of its existence, it provided refuge for different princely dynasties and controlled the Ani-Dvin road. The monument is situated adjacent to one of the oldest Armenian settlements; to the south of the fortress lie the ruins of the ancient settlement of Kagheni and the St. Kristapor Church (7th century). *Methods and Materials:* The research was conducted on the basis of a comprehensive study of historical sources, as well as integrated constructional, typological, and proportional analyses. Published archaeological data and cartographic materials were also utilized. *Analysis:* The study examines the distinctive features of the fortress's various chronological layers, construction solutions, and the lack of precise analytical assessment regarding them. The stratigraphic data of the monument were analyzed using the Harris Matrix method. *Results*: The absence of a comprehensive study of the monument's historical and architectural layers has led to disagreements among specialists. Through integrated analysis, this work fills gaps in the stratigraphic data and concludes that Dashadem Fortress had already reached at least its fourth construction phase during the Bagratid period. *Authors' Contribution:* The authors carried out a comprehensive collection of historical sources, architectural-typological research, stratigraphic analysis, and documentation of materials, while simultaneously synthesizing the study's conclusions.

Key words: *Talin, excavation, Ani capital, Zakarids, Bagratids, inscription, The Harris matrix.*

Citation: Vahramyan A., Abroyan A. *Issues Regarding The Chronological Dating of Some Structures in Dashtadem Fortress* // «Scientific works» of SCAS NAS RA. Gyumri, 2026. Vol. 1(29). 276-292 pp..

DOI: 10.52971/18294316-2026.29.1-276

ՆԱԽԱԲԱՆ. Դաշտադեմ ամրոցի ժամանակագրական թվագրման խնդիրները շփոթմունքների երկար շղթա են առաջացրել, որի հիմքում ընկած են նաև ժամանակի ընթացքում տեղանունների շարունակական փոփոխությունները[1]: Հուշարձանի տարածքի մինչ օրս ոչ հիմնովին պեղված լինելը, տիպաբանական ուսումնասիրության ու հայտնաբերված պատմական շերտերի՝ ճարտարապետական տեսանկյունից թերի վերլուծված լինելը, մինչ վերականգնումը արխիվային լուսանկարների բացակայությունը, ինչպես նաև պեղման արդյունքների ոչ լիարժեք վերլուծությունը էլ ավելի են բարդացնում հուշարձանի հստակ շերտագրական վերլուծության ընթացքը: Ի հավելումն դրան՝ նշենք, որ առկա փաստաթղթերն իրենց հերթին չեն տալիս բավարար պատկերացում այս բազմաշերտ հուշարձանի գործունեության բոլոր գործառույթների մասին: Այսօր վերջին տասնամյակներին իրականացված մասնակի վերականգնման աշխատանքների արդյունքում հետազոտողները բախվում են մեկ այլ խնդրի՝ վերականգնված, ավելացված շերտերի և պատմական արժեք ներկայացնող շերտերի հստակ տարբերակման հնարավորության բացակայություն, ինչպես նաև դրանց փաստաթղթային որոշ անճշտություններ: Ամրոցի զարգացման ժամանակագրության մեջ կարևոր է ճշգրտել դրա կառուցման շերտագրական տվյալները՝ հնարավորություն ընձեռնելով այն գնահատելու պատմական իրադարձությունների համատեքստում: Մասնավորապես՝ առանձնահատուկ դեր ունեն Բագրատունյաց թագավորության ծաղկման ժամանակաշրջանում Անի մայրաքաղաքից սերող պատմական, ճարտարապետական, տիպաբանական ազդեցությունները: Տվյալ աշխատությունը նպատակ ունի լրացնելու Դաշտադեմի ամրոցի վերաբերյալ կատարված հետազոտությունների մեջ առկա բացերը՝ պարզաբանելով շրջանառվող վարկածների խնդիրները:

Պեղումների և մասնակի վերականգնումների ընթացքում առաջացած խնդիրներ.

Դաշտադեմ ամրոցում վերականգնման առաջին աշխատանքները սկսվել էին դեռևս 1991 թվականից (առաջին փուլ), չնայած պեղումներն իրականացվել են միայն 1989-1990 թվականներին՝ դղյակի ներսում [4, էջեր 113-114], և հետևաբար չկան տվյալներ ամրոցի պահպանված տեսքի մասին: Վերականգնվում են ամրոցապատերը, ղեկ.՝ Ա. Հարությունյան [5]: Հաջորդ փուլում՝ պատմամշակութային հուշարձանների պահպանության և զբոսաշրջության զարգացման պետական ծրագրի շրջանակներում, 2005 թվականից սկսած՝ կատարվում են Դաշտադեմի ամրոցի ամրակայման և վերականգնմանն ուղղված աշխատանքներ (պեղման, գիտանախագծային փաստաթղթերի կազմման և իրականացման աշխատանքներ) միջնաբերդի տարածքում [8, էջեր 35-37], 2006 թվականին ՀՀ կառավարությունը գումար է հատկացնում ամրոցի վերանորոգման տեղանքը կողմնակի շինություններից մաքրելու համար: Վերականգնվում են ամրոցի գլխավոր մուտքը և տարածքում

[1] Ներքին Թալին գյուղը վերանվանվել է Դաշտադեմ 1979 թվականին՝ հավանաբար Վերին և Ներքին Թալիների անվանումների հետ կապված շփոթմունքից խուսափելու նպատակով:

գտնվող եկեղեցին: Բացի դրանից, հետագայում պարիսպների արանքում կառուցված տների բնակիչները տեղափոխվում են այլ բնակավայրեր [1]:

2007-2009 թթ. մասնակի վերաշարվում են ներքին պարիսպը, միջնաբերդի աշտարակները: 2011թ. վերսկսվում են ամրոցի պեղումները Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի կողմից: Աշխատանքները կենտրոնացվում են ամրոցի արևմտյան և հարավարևմտյան հատվածներում՝ միջնաբերդի և պարսպապատի միջև [2]: 2015թ. դղյակի հարավարևմտյան հատվածում պեղումներ է իրականացնում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը [3]: Պեղումների և վերակազնման առաջին փուլի միջև հուշարձանի փաստացի վիճակի մասին հստակ փաստող լուսանկարների, գծագրերի բացակայության պատճառով բախվում ենք գլխավոր խնդրին՝ մինչ վերականգնումը փաստացի մեզ հասած պատմական շերտերի ճարտարապետական, տիպաբանական, շինարվեստի վերլուծության և փաստագրման բացակայությանը: 2011-2015 թ. վերսկսած պեղումների արդյունքներով Դաշտադեմի ամրոցի տարածքում հայտնաբերված ամենավաղ հնագիտական շերտը վերաբերում է զարգացած միջնադարին (12-րդ դար)՝ սկզբնավորվելով Շադդադյանների իշխանության օրոք:



Դղյակի շինարարական փուլերը և դրանց ժամանակագրական խնդիրները.

Դաշտադեմ ամրոցում մինչև զարգացած միջնադարի վերջին շրջանը (14-րդ դար) կարելի է հստակ առանձնացնել 5 շինարարական փուլ, պատմական շերտ. առաջին՝ դղյակի ուղղանկյուն դահլիճի միջուկը, երկրորդ՝ դրա արտաքին և ներքին երեսպատումը (հավանական թաղակապ ծածկի ավելացում), երրորդ՝

հյուսիսային, հարավային բազմանիստ, արևելյան և հավանական արևմտյան կորագիծ աշտարակների կցումը, չորրորդ՝ արևմտյան աշտարակի և կից անկյունային հատվածի վերակառուցումը, հինգերորդ՝ հարավարևմտյան, հարավարևելյան աշտարակները և հյուսիսարևելյան աշտարակների կցումը (հնարավոր է նաև ավելի ուշ՝ 6-րդ փուլ)։ Դղյակի արևմտյան աշտարակի վրա թողնված արաբերեն արձանագրությունը, լինելով հուշարձանում պահպանված և մեր օրեր հասած միակ թվագիր արձանագրությունը, ամրոցի թվագրման հարցում գլխավոր աղբյուրն է։ Այն վերաբերում է 12-րդ դարին՝ թողնված Շադդադյանների կողմից։ Ստացվում է, որ ըստ Շադդադյան իշխանների կողմից արևմտյան աշտարակի վրա թողնված արձանագրության, նրանց՝ Դաշտադեմում իշխանության շրջանը (մոտ 1164-1174 թթ.) վերաբերում է 5-րդ փուլին։ Այստեղ պետք է նկատել, որ, համաձայն պեղումների տվյալների և հնագիտական նյութերի, Շադդադյանները պետք է կառուցած լինեին աշտարակները (3-4 փուլեր) [9, էջ 264]։ Համաձայն նույն պեղումների արդյունքների՝ Զաքարյանների ժամանակաշրջանին են վերաբերում դղյակի անկյունային կորագիծ աշտարակները, ինչպես նաև առաջին պարսպագոտու կառուցումը [9, էջ 265] :

Դղյակի արևմտյան աշտարակի կառուցման
և արձանագրության թվագրման խնդիրները.

Արձանագրությունը գտնվում է արևմտյան աշտարակի հարավային կողմում՝ մուտքին կից և վկայում է իրականացված վերանորոգումների մասին՝ նշելով. *«Փառք Ալլահին, 570 թվի օրինյալ Սաֆար ամսին [1174 թվականի սեպտեմբեր] ամիր, մեծ հրամանատար, Ադուդ ադ-Դին [կրոնի վստահված], մու-իզ ալ-իսլամ [իսլամը փառաբանող] սուլթան իբն Մահմուդ իբն Շավուրը կանգնեցրեց այս ամրոցը…»* [10, էջ 46]։

Հետազոտողները շինարարական 4-րդ փուլն ուսումնասիրելիս որպես հիմք ընդունում են հենց այս արձանագրությունը՝ թվագրելով այն 1174 թվականով։ Չնայած, որ համաձայն արևմտյան աշտարակի արձանագրության կատարման շինարարական տեխնիկայի ուսումնասիրությունների [պատկեր 3-5], կարելի է պնդել, որ արձանագրությունն արդեն իսկ կանգուն աշտարակի մեջ տեղադրվել է ավելի ուշ։ Այս մասին իր աշխատանքի մեջ նշել է նաև Թ. Թորամանյանը. *«Մուտքի կից բուրգի ճակատին, հայերեն արձանագրության մոտիկ կա մի պարսկերեն արձանագրություն հետնագոյն ժամանակի մտցված»* [3, էջ 252]։

Սրանում կարելի է համոզվել արձանագրության քարերը և դրանց մշակումները դիտարկելով և դրանք Հարրիսի մատրիքսի մեթոդով վերլուծելով, ըստ որի՝ արձանագրության քարաբեկորները առանձին համակարգ են արդեն իսկ ձևավորված աշտարակի շարվածքում՝ այլ մշակումներով և շինարարական տեխնիկայի լուծումներով։ Աշտարակի այս հատվածում քարի մշակման մեթոդների և կից տեղադրված քարերի եզրերի մանրամասն ուսումնասիրությունը [պատկեր 3-4] միայն հաստատում է այն վարկածը, որ այս արձանագրությունը փաստացի մտցված է արդեն իսկ կառուցված աշտարակի մեջ և չի տալիս իրական տեղեկություն նրա կառուցման թվագրման մասին։ Այստեղից կարելի է հստակ եզրահանգել, որ դղյակի արևմտյան աշտարակը կառուցվել է առնվազն մինչ 1174թ.։



▲ *Պատկեր 1: հեղ.՝ Գարեգին Հովսեփյան, XX դարի 1-ին քառորդ (c) ՀՊԹ*

▼ *Պատկեր 2: անհայտ հեղինակ*



սրբատաշ հարթմշակում

կոպտատաշ հարվածային մշակում

հարթ մշակման վերադրում

արձանագրության հարթ մշակում

վնասվածքներ

Պատկեր 3. Սուլթան Շադդադյանի կողմից թողնված արձանագրության վերլուծությունն ըստ շարվածքի մշակման տեխնիկայի, 1174թ.

Ինչպես տեսնում ենք, արձանագրության քարաբեկորները առանձին համակարգ են արդեն իսկ ձևավորված աշտարակի շարվածքում՝ անհամարժեք մշակումներով և շինարարական տեխնիկայի լուծումներով: Աշտարակի շարվածքն ունի մշակման հստակ տեխնիկա, ձևավորված համակարգ, որը խախտված է միայն արձանագրությունը պարփակող քարաբեկորների դեպքում: Եվ, չնայած որ արաբական միջնադարյան վիմագրական մշակույթում լայն տարածված է եղել արձանագրությունների քարաբեկորները տեղադրել շարվածքի մեջ, հարկ եղած դեպքում կտրելով քարերից մի քանիսը՝ Դաշտադեմի ամրոցում

իրավիճակն այլ է. քարաբեկորները աշտարակի շարվածքին բնորոշ համարժեք համակարգ չեն, դրանք դրվել են ավելի ուշ և խախտել են ձևավորված շարվածքի մշակման տեխնիկան (եզրային, ներքին մշակումները [քար 1], քարի կտրման անհամարժեք լուծումները՝ սուր անկյամբ առաջացնելով ջարդվածքներ [պատկեր 2, քար 13, 14]:



Պատկեր 4. Սուլթան Շադդադյանի կողմից թողնված արձանագրության քարի մշակումները, 1174 թ.՝ վերլուծված Հարրիսի մատրիքսի մեթոդով

Քարի հետագա մշակման [4] տիպը վերադրված է պատի կանոնավոր շարվածքի քարերի նախաստեղծ 2 տիպի մշակումներին, մինչդեռ արձանագրության թվագրման վավերական լինելու պարագայում դրանք չէին հատվի կամ վերադրվի (4□2), կառնչվեին միայն եզրային մշակումները (3=3), մշակման տեխնիկան կլիներ միմյանց համարժեք, իսկ 8-րդ բեկորը դրված է ավելի ուշ շրջանում՝ քարի կոտրման պատճառով, քանի որ չունի հետագա մշակման [4] հետքեր։





1174 թ.

Պատկեր 5. Սուլթան Շադդադյանի կողմից թողնված արձանագրությունը, 1174 թ.՝ վերլուծված Հարրիսի մատրիքսի մեթոդով:

Միջնաբերդի ներքին պարսպի թվագրման խնդիրները.

Որոշ մասնագետներ ներքին պարսպի շինարարությունը թվագրում են 12-13-րդ դարեր՝ հղում կատարելով Զաքարյանների շրջանին: Սա, թերևս, ամենատարածված կարծիքն է, որը շփոթմունք է առաջացնում տիպաբանական վերլուծություն կատարելիս: Միջնաբերդի պարիսպներն ունեն 2 մուտք հարավային (գլխավոր) և արևելյան կողմերից: Երկուսն էլ պսակված են զույգ աշտարակներով, ինչը Բագրատունյաց թագավորության շրջանի ճարտարապետությանը (10-11րդ դդ.) բնորոշ հատկանիշ է, որը հատկապես նկատելի է Անի մայրաքաղաքի ծաղկման շրջանում կառուցված պաշտպանական կառույցներում՝ մասնավորապես Սմբատյան (986-988 թթ.) և Աշոտյան (964 թ.) պարիսպներում: Պետք է նշել, որ Բագրատունյաց Անիում մուտքային հանգույցների տիպաբանության մեջ զույգ աշտարակները տարբերվում են չափերով, առանցքների անկյան չափով և լայնությամբ, ինչպես նկատվում է քաղաքի 3 գլխավոր մուտքերում (Նոր Դվնո, Կարուց, Ավագ դուռ): Որպես կանոն՝ դրանք ունեն կիսաշրջանագիծ հատակագիծ՝ ձգված պատերով: Զաքարյանների շրջանին հատուկ պաշտպանական կառույցները իրենց տիպաբանական առանձնահատկություններով տարբերվում են Բագրատունյաց շրջանին բնորոշ ճարտարապետական առանձնահատկություններից. դրանք հիմնականում ունեն ավելի կանոնավոր երկրաչափական բնույթի ծավալներ՝ մաքուր շրջանագծային և գրեթե առանց ձգված շոշափող հատվածների, ինչպես նկատելի է Բջնիի ամրոցում, Ամբերդում, Ախթալայի ամրոցում և այլն: Ինչպես արդեն նշեցինք նախորդ բաժնում, միջնաբերդի արևմտյան աշտարակը կառուցվել է առնվազն մինչև 1174 թվականը: Ուսումնասիրելով աշտարակի տիպաբանական առանձնահատկություններն ու համաչափությունները [պատկեր 5-6]՝ կարելի է զուգահեռներ տանել ներքին պարսպի մուտքային աշտարակներին:

Համաչափությունների ուսումնասիրությունը ներկայացված է ստորև: Եվ հետևաբար շինարարական 4-րդ փուլը, որն ակնհայտորեն առանձին է դղյակի մնացած աշտարակներից, համապատասխանում է ներքին պարսպի կառուցման շինարարական փուլին, նախորդում է 1174 թ. և, ըստ տիպաբանական, ինչպես նաև շինարարական տեխնիկայի նմանության և համաչափական հստակ վերլուծության, պատկանում է Բագրատունյաց շրջանին: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Բագրատունյաց շրջանում (9-11րդ դարերում) Դաշտադեմի դղյակը, ունենալով ստրատեգիական նշանակություն, պետք է ունենար կա՛մ պաշտպանական տեղադիրք, կա՛մ շրջափակող պարիսպ:



Պատկեր 6: Անի, Կարուց դուռ

Պատկեր 7: Դաշտադեմ, ներքին պարիսպ, գլխավոր մուտք
/չափագրությունը՝ Ա. Սամուելյանի, Ս. Աղայանի, Մ. Դանիելյանի/





Պատկեր 8: Անի, Նոր Դվնո դուռ

Պատկեր 9: Դաշտադեմ, ներքին պարիսպ, արևելյան մուտք

/չափագրությունը՝ Ա. Սամուելյանի, Ս. Աղայանի, Մ. Դանիելյանի/



$R_{արտ}$ / $R_{ներ}$ = 1,67

a / b = 1,22

a / $R_{արտ}$ = 1,89

b / $R_{ներ}$ = 2,58

l / $R_{արտ}$ = 2,495

l / $R_{ներ}$ = 4,17

Պատկեր 10: Դաշտադեմ, միջնաբերդ, արևմտյան աշտարակի համաչափությունների վերլուծությունը /չափագրությունը՝ Ա. Սամուելյանի, Ս. Աղայանի, Մ. Դանիելյանի/



$R_{արտ}$ / $R_{ներ}$ = 1,7

a / b = 1,27

a / $R_{արտ}$ = 2,225

b / $R_{ներ}$ = 2,98

l / $R_{արտ}$ = 2,75

l / $R_{ներ}$ = 4,68

$R_{արտ}$ / $R_{ներ}$ = 1,74

a / b = 1,21

a / $R_{արտ}$ = 2,38

b / $R_{ներ}$ = 3,43

l / $R_{արտ}$ = 2,97

l / $R_{ներ}$ = 5,19



Պատկեր 11: Դաշտադեմ, ներքին պարիսպ, արևելյան մուտքի համաչափությունների վերլուծությունը /չափագրությունը՝ Ա. Սամուելյանի, Ս. Աղայանի, Մ. Դանիելյանի/



Պատկեր 12: Դաշտադեմ ամրոցի դղյակի շինարարական փուլերը՝ վերլուծված Հարրիսի մատրիքսի մեթոդով



ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Դաշտադեմ ամրոցը իր գոյության բոլոր փուլերում կարևոր ռազմաստրատեգիական, պատմամշակութային դեր է խաղացել տարածաշրջանում՝ պայմանավորված թե՛ զբաղեցրած կարևոր դիրքով և թե՛ ճարտարապետական հարուստ շերտերով: Այն պաշտպանել է միջնադարյան Անի մայրաքաղաքի արևելյան մատույցները, իսկ 11-րդ դարում ամրոցը պատկանում էր Աշոտ Դ-ին [6, էջ 111] և ռազմատնտեսական կարևոր հանգույց էր Դվին-Անի ճանապարհին: Բացի դրանից, Մխիթար Անեցու Պատմությունից տեղեկանում ենք Գագիկ Ա Բագրատունու մահից հետո գահը ժառանգած նրա առաջնեկի՝ Հովհաննես Սմբատի (1017-1041) և վերջինիս կրտսեր եղբոր՝ Աշոտ Դ-ի միջև ծագած պայքարից հետո տեղի ունեցածների մասին. 1021 թ. Պետրոս Ա կաթողիկոսի և իշխանների միջնորդությամբ կայացած հաշտությամբ որոշվել էր, որ Հովհաննես Սմբատը պետք է թագավորի Անիում ու նրա միջակայքում, իսկ Աշոտը՝ մնացյալ հատվածներում: Մխիթար Անեցուց օգտվելով՝ Վարդան Արևելցին պատմում է, որ Թալինի ստորոտում գտնվող իր զորակայանում հիվանդ ձևանալով՝ Աշոտը մատնում և ձերբակալում է Հովհաննես Սմբատին [5, էջեր 102-103]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ դեռևս 11-րդ դարասկզբին Դաշտադեմի ամրոցն արդեն իսկ հաստատված հենակետ էր թագավորության սահմաններում: Դրյակի՝ Շադդադյանների արձանագրությամբ աշտարակը և ներքին պարսպագոտին կառուցվել են Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում՝ ենթադրաբար 10-11դդ դարերում: Ուստի, ելնելով պատմագրական իրադարձությունների շղթայի և ճարտարապետա-տիպաբանական ամբողջական ուսումնասիրությունից, կարելի է պնդել, որ Դաշտադեմի ամրոցը Բագրատունյաց շրջանում արդեն իսկ հաստատված է եղել առնվազն շինարարական 4-րդ փուլում: Սա ենթադրում է, որ միջնադարյան շինարարության տեսության պայմաններում առաջին 3 շերտերը կձգվեն էլ ավելի վաղ շրջաններ:



1-ին փուլ
2-րդ փուլ
3-րդ փուլ
4-րդ փուլ
5-րդ փուլ
6-րդ փուլ

0 10 20 30 40 50

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աֆյան Ա.** *Դաշտադեմ. Եզակի միջնադարյան ամրոցի պեղումները շարունակվում են.* https://news.am/arm/news/363582.html
2. **Ալեքսանյան Տ., Միրիջանյան Դ.** *Դաշտադեմի 2011 թ. պեղումները:* Էջմիածին: 2011:
3. **Թորամանյան Թ.** *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության*:Երևան: ԳԱ հրատ.:1948: 307 էջ:
4. *Հայաստանի Հանրապետությունում 1989-190 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունք-ներին նվիր-ված նստաշրջան*: Երևան: 1991:
5. **Մաթևոսյան Կ**. *Անի-Շիրակի պատմության էջեր*: Երևան: հեղինակային հրատարակություն: 2010: 294 էջ:
6. **Մաթևոսյան Ռ**. *Բագրատունիներ:* Երևան: Անահիտ: 1997: 136 էջ:
7. *Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի վկայագիր*: ՀՀ Մշակույթի նախարարություն, Պատմամշակու-թային ժառանգության գիտահետազոտական կենտրոն: պետ. ցուցակի ցուցիչ 2.35.1.:
8. **Սարգսյան Գ.** *Դաշտադեմի ամրոցը. հայ ամրոցաշինական եզակի կառույցի զարգացման փուլերը* // «Հայ արվեստ»: Հ. 3-4: Երևան: 2007:
9. **Babajanyan A., Aghaian S.** *The excavations of Dashtadem Fortress: preliminary report on 2015 fieldwork activity* // Aramazd Armenian Journal of Near Eastern Studies. Oxford. 2017. pp
10. **Хачатрян А.** *Корпус арабских надписей Армении, выпуск 1.* Ереван: Изд-во АН Арм.ССР. 1987. 235 с..

R e f e r e n c e s

1. **Afyan A.** Dashtadem: Excavations of unique medieval Armenian fortress continue https://news.am/eng/news/363582.html
2. **Aleksanyan T. Mirijanyan D**. 2011 Excavations of Dashtadem *[Dashtademi 2011 t. peghumner@]*. Etchmiadzin. 2011. (in Armenian)
3. **Toramanian T.** Materials on the history of Armenian architecture *[Nyuter hay chartarapetutyan patmutyan]*. Yerevan. NAS RA Publishing House. 1948. 307 p.. (in Armenian)
4. Symposium Dedicated to The Results of Archaeological Research in 1989-1990 in Republic of Armenia *[Hayastani Hanrapetut'yunum 1989-1990 tt'.dashtayin hnagitakan ashkhatank'neri ardyunk'nerin nvirvats nstashrjan]*.Yerevan.1991.(in Armenian)
5. **Matevosyan K.** Pages From The History of Ani-Shirak *[Ani-Shiraki patmutyan ejer]*. Yerevan. Author's Edition. 2010. 294 p.. (in Armenian)
6. **Matevosyan R**. Bagratids *[Bagratuniner]*. Yerevan. Anahit. 1997. 136 p.. (in Armenian)
7. Certificate of Immovable History and Cultural Monument. Ministry of Culture of the RA, Scientific Research Center of Historical and Cultural Heritage. State List Index 2.35.1.
8. **Sargsyan G**. Dashtadem Fortress: The Development Phases of a Unique Armenian Fortification Structure *[Dashtademi amrots'ĕ: hay amrots'ashinakan ezaki kaṛuyts'i zargats'man p'ulerĕ]* // Hay Arvest. Yerevan. 2007. Vol. 3-4.
9. **Babajanyan A., Aghaian S.** The excavations of Dashtadem Fortress: preliminary report on 2015 fieldwork activity // Aramazd Armenian Journal of Near Eastern Studies. Oxford. 2017. pp
10. **Khachatryan A**. Corpus of Arabic Inscriptions of Armenia, vol.1 *[Korpus arabskikh nadpisey Armenii]*. Yerevan. Academy of Sciences of the Armenian SSR. 1987. 235 p.. (in Russian)

Ընդունվել է / Received on: **28. 03. 2026**
Գրախոսվել է / Reviewed on: **10. 04. 2026**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **15. 05. 2026**

Տեղեկություններ հեղինակների մասին

Անի Հովհաննեսի ՎԱՀՐԱՄՅԱՆ՝ ճարտարապետության բակալավր,
Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարան, Երևան, ՀՀ,
էլ.հասցե՝anivahramyan90@gmail.com, https://orcid.org/0009-0008-7272-1583

Ani Hovhannes VAHRAMYAN: Bachelor of Architecture, NUACA, Yerevan, RA
e-mail:anivahramyan90@gmail.com, https://orcid.org/0009-0008-7272-1583,

Արմեն Սամվելի ԱԲՐՈՅԱՆ՝ ճարտարապետության թեկնածու,
Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարան, Երևան, ՀՀ
էլ.հասցե՝ arsabro@mail.ru

Armen Samvel ABROYAN*:* Candidate of Architecture, NUACA, Yerevan, RA
e-mail: arsabro@mail.ru